Պատերազմը լեռներում էր դեռ. քաղաք չէր խուժել: Անշուք շուկաներում, ջղային տներում, խավարամած փողոցներում, թափառող շների շատությամբ և տրանսպորտային կաթկթոցով թշվառությունն օրեցօր իրեն էր հաստատում...

Քաղաքը կռվին չէր մասնակցում առերևույթ: Պաղ էին աչքերը, խելքը՝ մտացիր, քայլերը՝ դանդաղաքարշ, և կնճիռները բազմապատկվել էին դեմքին՝ հեռուստաալիքների պես տեսանելի ու անտես, ասես տարիներով նստած էր եղել հարազատի մահճի մոտ:

Պողոտաներից մեկով,– հենց մութն ընկնում էր՝ դրանք ամայանում էին, որովհետև շները սոված էին և ավազակային կրակահերթերն էին խռովում լռությունը, -որտեղից-որտեղ տրոլեյբուսի ցոլարձակներ երևացին: Կանգառում կուտակված մարդիկ հրմշտոցով բարձրացան, և, սրահի լուսատիկները վառած, աղջամուղջի միջով շարժվեց այդ ապակեպատ, մետաղյա պահարանը:

Ուղևորները, որ նույնադեմ էին, սևեռվել էին իրենց ներսի պատկերներին, կարելի է ասել՝ մթնշաղին: Նրանց զանգվածի մեջ երեխաներ կային, տարեցներ, կանայք, տղամարդիկ: Հենց նրանց զննելով էլ ժխտվում էր այն անբարո իմաստնությունը, որ պատերազմը, հաղթես թե պարտվես, լարում է մկանները, միտքը, հոգին՝ ողբերգականից մինչև հերոսականը, և կյանքը մաքրում բորբոսից, ջահել արյուն ներարկում:

Տրոլեյբուսը վերջում նստելատեղեր չուներ: Ուղևորները բռնել էին իրարից ու հենաձողերից: Քամահար դեմքով մի կարճահասակ, պեպենոտ մարդ տեղում տիտիկ չէր տալիս: Խլրտոցը հասավ մինչև վարորդի խցիկը, որի նեղ դռնակից պառաված տոմսավաճառը հնդկահավի իր վիզը երկարեցրեց՝ տեսնելու, թե ինչ է կատարվում:

Պեպենոտը թշեղ էր, ականջակալներով գինվորական գդակ էր դրել և անկյունում սեղմված մի գեղեցիկ աղջկա (սա կարծես իր անմեղությունն էր փորձում պահել) ասում էր.

- Ջա՜նա, հաջորդը Կուտուզովի փողոցն է: Օ՜, ինչ զորավար էր, դու չես իմանա, դեռ ջահել ես... Ջա՜նա, ուրեմն, ես քեզ կարող եմ օգնել՝ տանել էդ ծանր բեռդ, հա՛, պայուսակդ. ինչ կա որ, տղամարդն օգնում է մի աննման աղջկա, հա՞, ջա՜նա: Մենք քո տեսքի մարալների համար էնտեղ կյանք ենք տալիս, մամայի՜ս արև: Ոչի՞նչ, որ մարած ծխախոտս ձեռքիս է, հենց իջնենք՝ կգցեմ. կուլտուրա՜ կա, քաղաքավարությո՜ւն... Ջա՜նա, ես էդ, ո՞նց էր՝ պայուսակդ, կհասցնեմ մինչև քո տուն, որ մատիկդ մի հատ փուշ էլ չմտնի:

Գեղեցկուհին ձգվեց, սիրտը թպրտաց, ավելի սեղմվեց տրոլեյբուսի մետաղյա ետնագոգին, որի հորիզոնական ապակու մեջ երևում էր իր կիսանդրին. ասես հեռուստաէկրանից տարերային աղետների, համաճարակի կամ հոսանքի անջատման մասին լուրեր էր հաղորդում:

- Իմանում ես չե՞մ հասկանում՝ էս պատերազմը ոնց է կոպտացնում կանանց փափլիկ ձեռքերը, ջա՜նա, բայց ես պատրաստ եմ իմ պինդ բազուկներով բերել քո բեռը, որ մ՝ատիկդ մի հատ փուշ էլ չմտնի,- նա ընդգծված կրկնեց քիչ առաջ ասվածը, - մի տեսակ անհանգիստ ես երևում, -մեռնե՜մ քեզ, տեղ հասար, հա՞: Թույլ տամ՝ իջնես: Բա չգա՞մ... է՜, Դուք գնում եք, Ձեզ չուղեկցեմ: Ոչինչ, ես սրտիս վերքը կբուժեմ: Ինձ համար տոմսակ չվերցնես, ես, փա՜ռք Աստծո, փող ունեմ: Գնա՜, մատա՜ղ, իմ սիրտը միշտ քեզ հետ է...

Իջնելիս գեղեցկուհին աննկատ ժպտաց քթի ծայրով, և իր ծանր պայուսակը, հավանաբար, թեթև տարավ: Տրոլեյբուսի դռները փակվեցին: Պեպենոտը, իբր վշտացած, շրջվեց և նկատեց ոսկեշար ատամներով միջին տարիքի մի տղամար-

դու, որը տնտղում էր իրեն: Սա մեջքով նստած էր դեպի սրահը՝ փոս ընկած նստատեղին: Սղալած մազերի արտացոլանքը կողապակու ռետինե շրջանակի ստորին մասում չէր տարբերվում վազող առնետից:

- Գնաց, - նկատի ուներ աղջկան, - Մենք ասում-խոսում ենք, ախպե՛ր, բան էլ չի պատահել, լյոխ լավ ա: Մենակ թե ծխախոտս մարեց: Զառա՛զա:

- Հը՞,-ռուսական այս բառի իմաստը գցել-բռնելով՝ միանգամից արտաբերեց ոսկեբերանը. երևի իր հասցեին ակնարկի երանգ էր նկատում:

- Հասկացա՛,- փորձեց պարզաբանել, - էն եմ ասում՝ որտեղ երեքը, այնտեղ էլ հինգը:

- Ի՞նչ հինգ,- կարծես ատամների ոսկին էր ծորացնում ախպերը:

- Հա, ուրեմն, ոնց որ ես՝ շուտ ես ըմբռնում. համա թե շու՛ն ես: Թխի գա: Որտեղ երեքը՝ էնտեղ էլ հինգը: Հարց չկա. դեռ մինչև լույս քանի՛ երեք ու հինգաստղանի ենք դատարկելու միասին...

- էրնե՛կ քո հավեսին, – ձեռքը դիմացինի բռի միջից հանեց սա,- էն կողմ քաշվի՝ ես իջա...

- Ափսոս, ախպե՛ր, թե չէ կարելի էր կըլթ-կըլթ, - և ցուցամատով կտտացրեց իր բկին: - Գնաս բարով, իմ տանջված-բարեկամ, ախպերությունը քեզ չի մոռանա:

Այդ կանգառում մի քանի ուղևոր էլ իջան: Միջանցուղով նա առաջ գնաց և հապաղեց երկու աղջնակների մոտ. երևի զույգ էին, սևի սիրուն ու հմայված-վախվորած լսում էին մեծերին:

- Օ՛, անմեղ հրեշտակներ: Ողջո՛ւյն, Գնդլիկովսկի, ողջո՛ւյն, Նազիկ-փափկամազիկ, - Եվ կսմթեց թմբլիկին:

Աղջնակը, վախը մոռացած, ժպտաց, ու երևացին նորելուկ ատամները:

- Դասերից չփախչես, Գնդլիկովսկի, մայրիկիդ կասեմ: - Եվ խոզուկի մռութ արեց՝ չնկատելով, որ երեխայի մայրը լարված հետևում է իր ամեն մի շարժումին:

- է՛յ, է՛յ, - ծղրտաց, - հեռո՛ւ գնա, գործ չունես երեխեքիս հետ:

- Դուք ինձ, շատ կներեք, չհասկացաք, - ստվերի մի ծվեն սահեց նրա քամահար դեմքով, -ես երեխաների հետ աշխատան-

քի մեծ փորձ ունեմ: Մայրի՛կ, ուրեմն, ինձ սխալ չհասկանաք: Գնդլիկո՛վսկի, իսկ դու մի՛ նեղանա. գիշերը երազում քեզ մոտ կգան բադիկները՝ կըռ-կըռ-կըռ, չվախենաս. կանչիր ինձ, և ես նրանց կքշեմ:

Երբ մոտակա շենքի լույսերն ընկան սրահ, փոքրիկներն ասես կանգնած լինեին Ամանորի տոնածառի տակ:

Ուղևորները, վարորդն ու տոմսավաճառը լեզվակռվի էին սպասում, սակայն փոթկացին: Մի քանի վայրկյան: Նորից լրջացան՝ վերադառնալով իրենց ներսի մթնշաղին: Միայն քույրիկներն էին բերանները բաց նայում մեջտեղի դռանը մոտեցող արտասովոր «խոզուկին»:

– Ես ձեզ լքում եմ, տիկնայք և պարոնայք: Կառավարությունը սպասում է ինձ: Լյոխ լավ կըլնի: Հեչ դարդ մի՛ արեք: Իմ սիրտը ձեզ հետ է, ով արծանացած մարդիկ. ուզում եք՝ պահեք, ուզում եք՝ տվեք Գնդլիկովսկուն, թող ձնագնդի ծեփի ու նետի ձեր վրա... Չաո՛:

Նա շուռ եկավ, հանդիսավոր հայացքով ընդգրկեց ուղևորներին, ապա՝ տամոսավաճառին, բաճկոնի մաշված թևքի միջից դաստակը կուսակցական գործչի թե արտիստի հանգույն թափահարեց և կարծես հալվեց կանգառի մառախուղի մեջ...

Տրոլեյբուսը նվերների պարկը դատարկած Չմեռ պապի տխրությամբ էր գլորվում դեպի կայարան: Ամա էին փողոցները: Շների ոհմակներ էին վխտում: Քաղաքը գլուխն առել ափերի մեջ՝ չէր հեռանում հիվանդի մահճի մոտից:

- Փո՛ղը, փո՛ղը, – ճչաց, կռռաց տոմսավաճառը՝ հիշելով այն տարօրինակ մարդուն, – թաղեմ աֆերիստ-ալկոհոլիկ գլուխդ:

Այս հեքիաթը նվիրում եմ որդուս՝ ***Հովհաննին***